

ւելի էր խօսքայ Նազարն, նաեւ սիրելի՝ Թաղաւորին Պարսից Շահա-
բասին: Եւ այս խօսքայ Նազարս առաքեաց զարս ոմանս ի Զուղա-
յեցւոց առ եպիսկոպոսն Շմաւոն, եւ խնդրեաց ի նմանէ զմասն նըշ-
խարացն. այլ եւ բանս սպառնականս եւ երկիւղալիս. եւ առաքեալքն
ի խօսքայ Նազարէն եկեալ պահանջէին յեպիսկոպոսն զմասն նշխա-
րացն, յորոյ երկիւղէ զանդիտեալ եպիսկոպոսն, ոչ կարաց Թա-
ղաւորանել կամ զերծանել ի Զուղայեցւոց, խորհեցաւ տալ ի նոսա
զնշխարսն: Բայց ի մասանց զմեծ կտորն պահեաց առ ինքն Թաղ-
աւոր, որ էր գլուխ Թիակին՝ որ է տեղի բոլոր ոսկերն որ է ի վե-
նոյն յարկեղն, եւ ետուն Զուղայեցւոց, որք տարան յԱսպահան քա-
ղաք, առ խօսքայ Նազարն»²⁶:

Ըստ Առ. Դաւրիթեցիի վերոյիշեալ վկայութեան, «պետ եւ զը-
լուխ էր խօսքայ Նազարն, ոչ միայն Զուղայեցւոց, այլ եւ ամենայն
հայազուն քրիստոնէից բնակելոցն ընդ Թաղաւորութեամբն Պարսից,
մինչ իր երէց եղբայրը՝ Սաֆար, նոր Զուղայի Հայոց քալանթարն
էր: Կերեւի թէ խօսքայ Նազար աւելի սիրելի էր Շահ Աբաս մեծին:
Տեսանք թէ Հռիփսիմեանց նշխարներու գիւտին ժամանակ խօսքայ
Նազար Դաւրէժ կը գտնուէր, Շահին քով: Նշխարներու գիւտին
մասին «խօսքայ Սաֆարն եւ Դաւրիթ Կաթողիկոսն գրով ծանուցեալ
են խօսքայ Նազարին՝ որ էր ի Թարվէզ: Եւ խօսքայ Նազարն, քանզի
համարձակ էր առաջի Շահին, ծանոյց նմա եւ խնդրեաց ի Շահէն
զԹուղթ հրամանաց եւ ծառայ Թաղաւորական առաքեալ զկնի պատ-
րեացն՝ որք զնշխարսն հանին, զի կալեալ զնոսա անցէ առաջի Թա-
ղաւորին, եւ Շահն արար զամենայն կամս խօսքայ Նազարին»²⁷: Շա-
հին հրամանակատարը ազգով հայ էր, Աւետիք Ալթուն կոչուած:
«Եւ զամենայն զոր ինչ պատշաճ էր գործառնութեանն այնմիկ, խօ-
սքայ Նազարն պատուիրեաց Ալթունին»²⁸: Ալթուն կ'երթայ Ապարա-
նէր, բռնութեամբ ձեռք կը բերէ նշխարները եւ կը վերադառնայ
Դաւրէժ, «եւ մատոյց առաջի խօսքայ Նազարին զնշխարսն եւ զպա-
տրիկսն. եւ խօսքայ Նազարն ծանոյց Շահին, եւ խնդրեաց ի Շահէն
եւ ասաց՝ Յաջողումն բախտի Թաղաւորիդ մերոյ ոչ եթող զնալ նըշ-
խարացն այնոցիկ ի Ֆռանկաստան»²⁹: Շահը դատաստանի կը նստի,
եւ հուակ «արար զհրաման տալ զնշխարսն զամենայն ցխօսքայ Նա-
զարն, որ եղեւ այնպէս»³⁰: Շահին հրամանով եւ խօսքայ Նազարի
խնդրանքով՝ Հռիփսիմեանց նշխարները կը զրկուին Սպահան եւ պահ
կը դրուին խօսքայ Սաֆարի մօտ:

26. Ամդ, էջ 524:

27. Ամդ, էջ 187:

28. Ամդ:

29. Ամդ, էջ 190-191:

Հռիփսիմեանց նշխարներու խնդրին մասնակցած կ'երեւի նաեւ
Էջմիածնի Մելքիսէթ Կաթողիկոսը, որ ամբաստանուած է իբր վա-
ճառող նշխարներուն: Շահը բռնութեամբ Գորիս բերել կու տայ Կա-
թողիկոսը, 1610ի մերձ ատեն մը, եւ կ'որոշէ Սպահան տանել զինքը
եւ հոն տեսնել անոր դատաստանը: Զուղայեցիներու զայրոյթը այն-
քան ուժեղ էր Մելքիսէթի դէմ, որ խօսքայ Նազար նոյնիսկ կը խոր-
հէր մահապատիժ տալ: Մովսէս Տաթեւացի իր մէկ նամակին մէջ,
ուղղուած Գրիգոր Կեսարացիի, կը վկայէ որ «դարձեալ ասաց յիշ-
խանն Հայկազ, թէ խօսքայ Նազարն տուաւ ունել զՄելքիսէթն ի Շա-
հոյն, զոր սպանել տայր. եւ աղաչեցի խօսքայ Նազարն՝ որ եթող»³¹:
Դժբախտաբար, անկէ ետք՝ Մելքիսէթ աւելի ծանր ելոյթներով փոր-
ձանք եղաւ թէ՛ Էջմիածնի, թէ՛ առհասարակ պարսկական սահման-
ներուն մէջ բնակող Հայոց, եւ նոյնիսկ Լեհահայերուն՝ որոնց մօտ
ապաստանեցաւ, իր մեծամեծ պարտքերուն համար, եւ ուր արքե-
պիսկոպոսացուց Նիկողայոս Թորոսովիչը, պատճառ դառնալով աղի-
տաւոր դէպքերու:

Շահ Աբաս ոչ միայն պատրաստ էր Էջմիածնի Կաթողիկոսու-
թիւնը Պապէն նշանակուած եկեղեցականի մը յանձնել, եթէ Պապը
կարենար Թուրքերու դէմ խաչակրութեան մը ձեռնարկել, այլ եւ
ծրագրեց Էջմիածնի մայր տաճարը քար առ քար քանդել ու փոխա-
դրել Սպահան, որպէսզի նոր Զուղայեցիները ա'լ չխորհին հայրենիք
վերադառնալու մասին: Լուսաւորչի Աջէն, խաչէն ու Աւետարանէն
ետք, Շահ Աբասի հրամանով, Էջմիածնի տաճարէն տասնեւհինգ ու-
րոշ քարեր կը պոկուին, 1614ին, եւ կ'ուղարկուին Սպահան: Շահը
ընտրած էր արդէն վայրը՝ ուր պիտի վերականգնէր Էջմիածինը:
Դաւրիթեցի կը պատմէ՝ թէ «Յաւուր միում գնաց Շահն ի նշանա-
կեալ տեղին, եւ էր ընդ նմա խօսքայ Նազարն, եւ այլք ոմանք ի Հա-
յոց: Ասաց Շահն ընդ խօսքայ Նազարին. Վասն ձեր շինեմ աստ Էջ-
միածին, զի մի՛ վասն այնմ Էջմիածնի կարօթութիւն կրեալ ճմրես-
միածին, զի մի՛ վասն այնմ Էջմիածնի քանդում ուղտ, ջորի եւ սայլ,
ցին սիրտք ձեր. եւ հրամայեմ գնալ բազում ուղտ, ջորի եւ սայլ,
զի զքար եւ զհող այնր Էջմիածնի քանդեալ բերքեն աստ, զի այնու
քարով եւ հողով շինեսցի այս Էջմիածինս, որպէս զի առանց իմիք
երկապութեան հաստատեսցին սիրտք ձեր ի վերայ նոր շինեցելոյս:
Եւ այսու կերպիւ հնարեալ կամէր քանդել զսուրբ Էջմիածին: Իսկ
Խօսքայ Նազարն, քանզի ոչ կամէր զքանդումն սուրբ Էջմիածնի, զի
կսկիծ էր սրտի նորա, եւ առ ի խափանելոյ զխորհուրդ Շահին,
պատասխանեալ է այսպէս. Թաղաւորն ողջ կայցէ. եթէ կամք քո

30. Ամդ, էջ 192:

31. Հ. ՆԵՐՍԷՍ ԱՎԻՆԵԱՆ, Մովսէս Գ. Տաթեւացի Հայոց Կաթողիկոսն եւ իր ժա-
մանկը, Վիեննա, Միլիթ. տպ. 1936 (Աղբ. Մանդ. ՃԼԹ), էջ 32, 47:

յօժարեացի շինել զէջմիածին զեղեցիկ եւ հաստատ, կարող ես յարժաթոյ եւ յոսկւոյ շինել, թող թէ ի քարէ. եւ զի՞նչ հարկ է յաղազս քարի եւ հողոյ զայնքան աշխատութիւնս կրել, եւ զայնքան ծախս ծախել ի վերայ նորա, որպէս զի ի հեռու եւ յօտար աշխարհէ քար եւ հող բերել: Բաւական եւ բարւոք է այս աշխարհիս քարն եւ հողն. եթէ կամիս շինել, առքօք շինեա՛, եւ ընդունելի է մեզ»³²:

Յրա Ճ. Թատէռու, 1616ի Մարտ 26ին, Սպահանէն Հռոմ ուղղած նամակի մը մէջ, առ Յրա Պենինիոս, կը յիշատակէ որ Սպահանի Կարմեղեան վանքի այգիներու պարիսպներուն եւ այլ շինուածքներու համար ընդունուած գործաւորներուն մէջ Հայեր չեն վարձած. «Ես չուզեցի Հայեր աշխատցնել, մինչեւ որ Սոջայ Նազար եւ Սոջայ Սաֆար ինծմէ խնդրեցին՝ զանոնք ալ շինութեան համար վարձել»³³:

1618ին կը վերանորոգուի 1280ին գրուած Աւետարան մը, ուր կը յիշուի. «զվերջին ստացող սուրբ Աւետարանիս, եւ Գործք-Առաքելոցն ընդ նմա, զՋուղեցի Պարոնաց Պարոն Սոջայ Նազարն, որ ստացաւ զսա հալալ եւ յարգար վաստակոց իւրոց, եւ ետ վերստին նորոգել, ծաղկել եւ զարդարել ոսկով եւ լազուարդով եւ աղբի աղ-գի երամբք զեղերով, ի պայծառութիւն սուրբ եկեղեցայց... յիշատակ բարի հոգոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց, հօրն՝ Սոջայ Սաֆարին, մօրն՝ Մարիամին, եւ եղբարցն Պարոնաց Պարոն Սոջայ Սաֆարին (Սաֆարին), եւ Սինանին...: Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՍոջայ Նազարն եւ զկողակիցն իւր Սաթուհիան, եւ զորդիքն իւրեանց, Պարոն Զաֆրաղն, զԵլիաղն, եւ զստերք իւրեանց»³⁴: Այս ձեռագրին վերանորոգումը կատարած է Մեսրոպ զպիր Սիդանցի, Սպահանի մէջ, Ռիֆթի թուականին (1618): Նոյն տարին կը մեռնի Սոջայ Նազարի երէց եղբայրը՝ Սոջայ Սաֆար: Զեռագիրը շատ ճոխ կերպով վերանորոգուած է եւ հաւանաբար մանրանկարչութիւնը ամբողջապէս «նորոգութիւն»ն ըլլայ Մեսրոպ Սիդանցիի:

Հետաքրքրական դէպք մըն ալ կը պատմուի «Բարոզիչներու Պատմութիւն» կոչուած ձեռագրի մը մէջ. դէպքը տեղի ունեցած է 1620ի Յունուար 16ին, ջրօրհնէքի արարողութեան մը առթիւ. «Շահը պահանջներ դրած էր Սպահանէն Ջուղայ տանող ճամբուն վրայ, որպէսզի ձիերը – բացի անոնցմէ՝ որ երեւելիներու կը պատկանէին – չխանդարէին թափօրը: Հարիւրէ աւելի արծաթէ եւ բլբլեղեայ խաչեր կը կրէին Ջուղայի տասը եւ Սպահանի երկու Գրիգորեան (դուն հասկցիր՝ Լուսաւորչական) եկեղեցիներու սպասաւորները. ոչ մէկ

32. Ա.Ռ. ԴԱԻՐԻԺ. Պոսթ., էջ 200-201:

33. Տե՛ս ծանօթ. թիւ 15:

34. Լոնտոնի Բրիտանական Թանգարան, հայ ձեռագիրներու ժող. թ. 8:

խաչ՝ չորս եկեղեցականներէ նուազ խումբով մը կը տարուէր. բոլորն ալ գունագեղ եւ ոսկեճամուկ շուրջառներ էին հագած, սպասարկու մոմակիրներով հանդերձ. թափօրը գետեղերը մօտեցաւ, եւ անկէ ալ անցաւ՝ ցանցառ ջուրին մէջ փոքրիկ կղզեակ մը, մինչ Հայերու եւ Պարսիկներու հսկայ ամբոխ մը, քաղաքէն եկած, գետեղերէն հանդիսատես կ'ըլլար արարողութեան: Շահին սպասման միջոց, որ ուշացաւ՝ իր տղոց եւ նախարարներուն հետ, խաղեր եւ պարեր տեղի ունեցան: Երբ Արաս Ա. ժամանեց, Հայոց Պատրիարք (այսինքն՝ Կաթողիկոս) Մելքիսեդէկէն առաջ անցաւ գետը, եւ անհանդարտ անձ մը ըլլալով, ինք ստանձնեց արարողութեանց վարիչն ըլլալու դերը՝ այս քրիստոնեայ կրօնական ծիսակատարութեան պէտք էր հոս Պատրիարքը կանգնիլ, հոն պէտք էր ծիսակատարութիւնը տեղի ունենալ, անդին պէտք էր կրօնաւորները շարուէին, միւս կողմը՝ խաչերուն հետեւող թափօրականները, որպէսզի խորհում տեղի չունենար. եւ շատ մը այլ մանրամասնութիւններ այսպէս կը վերատեսնուէին: Բուն ծէսը՝ աղօթքներէ կը բաղկանար, ապա միւսոնը ջուրին մէջ կը կաթեցնէին, բոլոր խաչերը ջուրին մէջ կը մխրձէին, ու բազմաթիւ անձեր, ջերմեռանդութենէ մղուած, կը հանուէին ու գետը կը նետուէին: Երբ արարողութիւնը վերջացաւ, Արաս Ա. կանգնեցաւ, միշտ շատ մօտէն շրջապատուած խաչակիր եկեղեցականներէ. հարցուց Հայոց գլխաւորին՝ որ իր ցեղը Վրացիներէ՞ր թէ Պարսիկներէ (այսինքն՝ Լատիններէ) լաւագոյն քրիստոնեաներ կը նկատէր. որուն Սոջայ Նազար դիւանագիտօրէն պատասխանեց՝ թէ առաջինները աւելի լաւ ծոմ կը պահէին: Շահին համար խորշիկ էր ամէն տեսակ ծոմապահութիւն: Շահը աւելի շեշտուած կերպով յայտարարեց թէ ինք հարցումը ըրած էր անոնց կրօնական օրէնքներուն վերաբերմամբ, եւ ծիսակատարութեանց մասին. որուն վրայ Սոջայ Նազար գովեց Լատինները: Այնուհետեւ անձրեւը շատ-նալով եւ փողոցները ցեխոտելով, Պարսիկ ինքնակալը իր անմիջանալով եւ փողոցները ցեխոտելով, Պարսիկ ինքնակալը իր անմիջական հետեւորդներով եւ երեք կաթողիկէ քարոզիչներով ապաստանեցաւ հանգուցեալ Սոջայ Սաֆարի տունը, որ գլխաւոր Հայն էր, նեցաւ հանգուցեալ Սոջայ Սաֆարի տունը, որ գլխաւոր Հայն էր, եւ հոն անցուց օրուան մնացեալ մասը եւ գիշերը»³⁵:

Շահ Արաս Ա. իր այս քրիստոնէամբձ դերակատարութեանց կողքին, լաւ գիտէր թէ պէտք էր նաեւ ապացոյց տալ իր մահմեկողքին, լաւ գիտէր թէ պէտք էր նաեւ ապացոյց տալ իր մահմեկողքին ինքնակալ մ'ըլլալուն՝ իր իսլամ հաւատացեալներուն առջեւ: Հաւանաբար կը հետապնդէր Հայերը մահմետականացնելու ծրագիր մը, բայց նաեւ կը զգար թէ Հայերէն մաս մը պէտք է որ քրիստոնեայ մնար, եթէ կ'ուզէր պարսկական միջազգային առեւտուրը զար-նեայ մնար, եթէ կ'ուզէր իր ԺԳ. գլուխը նուիրած է Շահին մէկ բուն դացնել: Դաւրիթեցի իր ԺԳ. գլուխը նուիրած է Շահին մէկ բուն

35. A Chr. of the Carm. in Persia, London, 1939, vol. I, էջ 245-246:

արկեալ առ միածին Որդին զտիրամայր սուրբ Աստուածածինն, զի շնորհալի ցուցցէ զսոնախմբութիւնն՝ այլահաւատ թաղաւորին, եւ արկցէ զգութ եւ զողորմ ի արտ նորա ի վերայ քրիստոնեայ ազգին: Որ եւ ողորմութեամբն Աստուծոյ եղեւ ըստ խնդրոյ վարդապետին. զի յաւուր տօնին մինչ նստէր արքայ ի դբօսանս տօնին՝ եւ վարդապետն զգեստաւորեալ իւրովք պաշտօնէիւքն՝ կատարէր զկարգն ջրօրհնաց, յոյժ հաճեալ եւ հաւանեալ էր արքայ ընդ տօնախմբութիւնն. եւ զթացեալ ի վերայ Մովսէսի՝ որ եւ հարցումն եւս արարեալ էր թաղաւորն յաղագս վարդապետին՝ ընդ խօսակցութեան, եւ նա զբանս բարիս եւ յովսէս խօսեցեալ էր վասն Մովսէսի առաջի թաղաւորին»:

«Իսկ զկնի աւուրց ասաց արքայ ընդ խօսակցութեան. զի՞նչ խնդիր ունի վարդապետն ձեր զի կատարեսցուք, զգա՞նք թէ զգաստակերտ, թէ այլ ինչ, զոր ինքն կամի. պատասխանեալ էր խօսակցն՝ թէ սա այնպիսի այր է, որ զաշխարհաւ եւ զընչիւք նորին զանց արարեալ է՝ եւ բնաւ մի ոք ի դոցանէ ոչ է կարիք սորա. այլ թէ շնորհ առնես տալ սմա զպարգեւս, զլուսարարութիւնն էջմիածնի տուր. զի անդ սպասաւորելով եկեղեցւոյն այնմիկ աղօթեսցէ վասն կենաց թաղաւորին: Յորոյ խնդիր յոյժ հաճեալ եւ հաւանեալ էր արքայ, եւ տուեալ էր Մովսէսի զլուսարարութիւնն սուրբ էջմիածնի թաղաւորական նոմոսի»³⁹:

Դաւրիժեցի այս դէպքը իր պատմութեան գրքին մէջ, տարբեր տեղեր, գրեթէ նոյնութեամբ երկու անգամ կը պատմէ⁴⁰: Առաջինին կը զուգէ նաեւ հետաքրքրական միջադէպ մը, որ խօսակց Նազարի մասին կարեւոր ծանօթութիւն մըն ալ կ'աւելցնէ, մեզի համար՝ թանկագին: Սահակ Կաթողիկոս Շահին կ'երթայ՝ զանգատելու թէ Զուղայեցիները իր կաթողիկոսական հանգամանքը կը մերժեն եւ արքունի հրամանը չեն ընդունիր. իսկ երբ Շահը կ'ուզէ գիտնալ անոնց ո՞վ ըլլալը, «Սահակն վասն երկիւղի՝ յանուանէ ոչ յիշեաց, այլ միայն ասաց՝ թէ յայտնի է թաղաւորին: Եւ Շահն իմացաւ զընդհանրութեան խօսակցութեան անհաշիւ քանակը»⁴¹: «Քօռ», անտարակոյս, պարսկերէն «քօռ» բառն է հոս գործածուած, որ կը նշանակէ կոյր կամ միականի: Ասիկա մեզի ենթադրել կու տայ որ խօսակց Նազարի միականի, կոյր, կամ գոնէ կարճատես եւ աչքէն վնասուած էր, որ Շահ Աբաս անոր «քօռ» մակդիրը տուած էր: Այս մասին այլուստ որեւէ տեղեկութիւն չունինք:

39. Անդ, էջ 301-303:

40. Անդ, էջ 233-234 եւ 301-303:

41. Անդ, էջ 232:

1627ին կը յիշուի «ի առաջնորդութեան Պարոն Նազարի», Նոր Զուղայի վանքի հաւաքման թիւ 96 ձեռագրին յիշատակարանին մէջ:

1628ին, անգլիացի ուղեգիր Թաոմըս Հերպերթ, անգլիական դեսպանութեան հետ հասաւ Սպահանէթ, որ Սպահանէ վեց մղոն հարաւ կը գտնուի: Երկար մանրամասնութիւններ տալով, ան կը հարաւ կը գտնուի: Երկար մանրամասնութիւններ տալով, ան կը գրէ՝ թէ «Քաղաքին մղոն մը աւելի մօտ, Վէդիբը, Սպահանի Սուլթանը, Մէլոյիմ պէկ եւ խօսակց Նազար հայ իշխանը, չորս հազար ձիաւորներու եւ անթիւ հետեակ չքախումբով մը մեզ դիմաւորելու եկան»⁴²: Յաջորդաբար, Թ. Հերպերթ կը գրէ՝ թէ 1628ի Ապրիլ 15ին, «Խօսակց Նազար հայ իշխանը, Զուղայի մէջ, իր տունը ընդունաւ այցելութիւնը (անգլիական) դեսպանին: Ան (Խօսակց Նազար) նեցաւ այցելութիւնը (անգլիական) դեսպանին: Ինքզինք քրիստոնեայ կը դաւանի, սակայն (ես պէտք է համարձակիմ ըսել) իր տունը կահաւորուած էր այնպիսի հրէշային նկարներով, այնպիսի տեղեր կերպերով, որոնք արդարեւ արժանի չեն յիշուի: Մեր ճաշին միջոց, ամէնէն շատ իմ ուշադրութիւնս գրաւեց խորոված խոզ մը, որ առաջինն էր իր տեսակին մէջ՝ Պարսկաստան խորոված խոզ մը, որուն միտք հաւասարապէս թէ՛ Բրեային եւ թէ՛ մեր տեսածներուն, որուն միտք հաւասարապէս թէ՛ Բրեային եւ թէ՛ մեր տեսածներուն համար խորշիկ է: Իր (Խօսակց Նազարի) տան բամբակեղէններ եւ գաւաթները ամբողջապէս ոսկիէ էին, բոլորմանաւ ժակները եւ գաւաթները ամբողջապէս ոսկիէ էին, բոլորմանաւ քաղցր ջուրի սրուակներ եւ Շիրազի գինիի ապակեքաժակներ պարպուցան՝ ջերմագին հիւրամեծարութեան համար»⁴³:

Հերպերթ այլուր կը ծանօթագրէ այսպէս. «Զուղան (Նորը) կը կառավարուի յատուկ գլխաւոր դատաւորէ մը, հայ քրիստոնեայ իշխան մը (ինչպէս որ զինք կը կոչեն), Խօսակց Նազար անունով (թէեւ իրականում՝ վաճառական մը), անոնց (Հայոց) վերագիտողութեան պաշտօնով»⁴⁴:

Անգլիացի ուղեգրին գայթակղութիւնը՝ ի տես Խօսակց Նազարի տան որմանկարներուն, անհիմն կը թուի: Անտարակոյս, պարսիկ արուեստին մեղկ ու սիրային տեսարաններու շարադրութեամբ այդ որմանկարները պատկերացուած էին պատշաճութեան սահմաններուն մէջ: Դժբախտաբար, աւելի ոչինչ գիտենք այդ որմանկարներուն մասին, որոնց հեղինակները՝ շատ հաւանաբար՝ կրնային ժամանակուան լաւագոյն նկարիչներն ըլլալ, պարսիկ կամ հայ, որոնց շարքին՝ գուցէ նաեւ Դաւրիժեցիին յիշուած համբաւաւոր վարպետ Մինասը⁴⁵:

42. THOMAS HERBERT, *Travel in Persia*, 1929 New York, էջ 121:

43. Անդ:

44. Անդ, էջ 137:

45. ԱՌ. ԴԱՒՐԻՇԻ. Պատմ., էջ 409-411:

Շատ ցաւալի է որ դրեթէ ոչինչ չօշափելի հասած է մեղի խօշայ Նազարի կենցաղային ճոխութիւններէն: Տարիներ առաջ, Լոնտոն կատարած բազմաթիւ այցելութիւններէս մէկուն ընթացքին, «Վիկտորիա եւ Ալբերտ» թանգարանի յախճապակիներու ճոխ հաւաքման մէջ նշմարեցի՝ սպիտակի վրայ կապոյտով ծաղկուած դեղեցիկ պնակ մը, որուն կեդրոնը կար հայերէն փակագիր գրուածք մը, որ անտարակոյս ՆԱԶԱՐԻԹ կը պարզուի: Նոյն պնակէն եւ նոյն փակագրով հատ մըն ալ կայ Ս. Նազարի Միթթարեան թանգարանին մէջ: Հուսկ՝ երրորդի մըն ալ հանդիպեցայ Նիւ Եորք, Պր. Յ. Հազարեանի անձնական հաւաքածոյին մէջ: Անտարակոյս, սեղանի ճոխ սարքաւորման մը մաս կազմած ամաններ էին ասոնք, որոնք փրկուած են ժամանակի փճացնող ճիրաններէն: Յատուկ մենագրութեամբ մը, նկարազարդ, ցոյց տուած ենք, ժամանակին, թէ վերոյիշեալ յախճապակեայ ամանները մաս կազմած են խօշայ Նազարի սեփական սարքին⁴⁶: Սեղանի այսպիսի ճոխ սարքաւորումներ՝ պըրապէս միայն մեծահարուստներու սեփական էր, եւ ըստ երեւոյթի՝ յատկապէս կենցաղասէր Զուղայեցիներուն:

1629ի սկիզբները կը վախճանի Շահ Աբաս եւ անոր կը յաջորդէ Շահ Սէֆի, հազիւ 18 կամ 19 տարեկան: Կարմեղեան Ֆրա Տիմաս, Սպահանէն Հոռոմ կը գրէ, նոյն տարուան Սեպտ. 18ին, թէ Շահ Սէֆի «ինքզինք բոլոր քրիստոնեաներուն հանդէպ բարեացակամ ցոյց կու տայ, եւ Հայոց հետ նոյնիսկ ընտանի: Ան շատ անգամ գացած է խօշայ Նազարի եւ Զուղայի ուրիշ (հայ) երեւելիներու տունները, անոնց տան մէջ ճաշելու⁴⁷:

Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի թանգարանին մէջ, Շահ Սէֆիէն հրովարտակ մը կը պահուի, ուր գրուած է. «Ըստ արքունի հրամանին, Զուղայեցի հայ վաճառականները եւ առեւտրականները, երբ արտասահմանէն ոսկի եւ արծաթ ներմուծեն, ատիկա պէտք է յանձնեն խօշայ Նազարին, որ՝ իր կարգին՝ պիտի յանձնէր խօշայ Սանտալին, ի դիմաց պետական գանձէն կատարուած փոխառութեան: Իսկ այժմ կը հրամայուի որ այդ ոսկին եւ արծաթը յանձնուի խօշայ Մարջանի, որուն տուած ստացագիրը պիտի ճանչցուի օրինական, եւ պետական պարտքին համար ընդունելի պիտի ըլլայ»: Հրովարտակին թուականն է Հիճրէթի 1039, որ հաւասար է Քրիստոսի թուականին 1629ի Օգոստ. 21էն 1630ի Օգոստ. 9: Հրովարտակին համաձայն, խօշայ Նազար կը դադրի վաճառականպետի իր

46. «Սաֆրագ եւ Նազարէ» փակագրութեամբ յախճապակիներ» (Ակնարկ մը պարսկահայ յախճապակեգործութեան վրայ). «Բազմալէպ», ձժԸ (1980), 7-8, էջ 157-166, նկարազարդ:

47. Chr. Carm. vol. I, էջ 308:

պաշտօնէն, եւ այլեւս արքունի վստահեալ հաշուէաւոր չէ, Շահ Սէֆիի օրով, եւ իր պաշտօնը կը փոխանցուի խօշայ Մարջանին: Հաւանաբար, խօշայ Նազարի առողջական վիճակը, յառաջացած տարիքը, աչքի տկարութիւնը՝ պատճառներ էին որ իր պաշտօնը յանձնուի ուրիշին: Սխալ պիտի ըլլայ խորհիլ թէ Շահ Սէֆի նուազ յարգանք ու համարում ունենար խօշայ Նազարի հանդէպ՝ քան թէ իր նախորդը Շահ Աբաս մեծ:

Կարմեղեան Ֆրա Տիմաս, 30 Մայիս 1627 թուակիր նամակով, Սպահանէն Հոռոմ կը տեղեկացնէր, ըսելով թէ «Աւագ Շաբաթ ալ-ցեկեցի խօշայ Նազարին, Զատիկ առիթով շնորհաւորութիւններ կատարելու համար...: Մենք ունինք մեր տունը՝ խօշայ Նազարին մէկ զաւակը, որ զրկուած է կրօնաւոր ըլլալու, եւ երեք ամիսէն մեր լեզուն (լատիններէն) սորվելու համար»⁴⁸:

խօշայ Նազար անշուշտ լատինասիրութենէ տարուած չէ որ ասիկա կ'ընէր. մենք կը համարինք թէ հեռատեսութեամբ կ'առաջնորդուէր՝ անդրադոյն նպատակներ հետապնդելով: Հարկը վը զգար որ իր ընտանիքէն մէկը, իր որդին, լաւ լատիններէն գիտնար: Այդպէս, ան ոչ միայն պիտի կարենար Եւրոպայի մէջ գործառնութիւններ կատարել առանց միջնորդի, այլ նաեւ բարեացակամութիւնը ներ կատարել առանց միջնորդի լատին կրօնաւորներու, եւ ակնարկ շահիլ Պարսկաստան գործող լատին կրօնաւորներու, եւ անոնց ալ միջոցով՝ Եւրոպայի եկեղեցականութեան: խօշայ Նազար նոնց ալ միջոցով՝ Եւրոպայի եկեղեցականութեան չըջաններուն հաւանօրէն կ'ուղէր՝ Եւրոպայի լատին ազգեցութեան չըջաններուն, մէջ՝ շահիլ հայ վաճառականներու համար նպաստաւոր պայմաններ, իրենց առուստուրին յաջողութեան համար: Լատիններէն ձեռագիր «Քալիքիցներու Պատմութիւն» գրքին մէջ, գլուխ 37, գիրք Գ. մասն Գ.) կը յիշուի յանձնարարութիւններէն մէկը՝ զոր խօշայ Նազար եւ Զուղայեցի Հայերը ըրած էին Ֆրա ձ. Թաւմէտուսի, երբ ան Սպահանէն կը մեկնէր 1628ի Նոյեմբեր 2ին⁴⁹. կը հայցէին որ Ֆրա Թաւմէտուս ըրէ իրենց Սրբգ. Պապին եւ ըսէ՝ թէ «իրենց ձեռքն առած ըլլալով բարեխօսէ Սրբգ. Պապին եւ ըսէ՝ թէ «իրենց ձեռքն առած ըլլալով Պարսկաստանի հոռոմ մետաքսի առուստուրը, որ տարեկան վեց միլիոն պարսկական դրամի (այսինքն՝ թումանի) կը հասնէր (բացի լիոն պարսկական դրամի (այսինքն՝ թումանի) կը հասնէր (բացի անգլիացիներու բաժինէն), կը խնդրէին Պապէն որ իրենց թոյլատրէ զանգիւղներու բաժինէն), կը խնդրէին Պապէն որ իրենց թոյլատրէ զանգիւղներու բաժինէն, եւ իրենց հայթայթելու յանձնարարականներ՝ քրիստոնեայ ուրիշ ինքնակալներու ուղղութեամբ, միեւնոյն նպատակին համար»⁵⁰: Դժբախտաբար, խնդրանքը ընթացք չգտաւ: Հաւատոյ Տարածման Ժողովը կը պնդէր որ կաթողիկէ Հայերու միայն կրնար

48. Անդ, էջ 318-319:

49. Ոչ թէ 1629ին, Նոր Զուղայէն, ինչպէս կը գրէ Հ. Ն. Ակինեան (տե՛ս Մովսէս Գ. Տաթեւացի Հայոց կրք., էջ 386):

50. Chr. Carm. vol. I, էջ 295:

բէթ Օրիորդի, Գիւմսէդ-ի-տուխտէր. զօրիորդդ այդ համարին ու մանք լինել դուստր խօջայ Նազարի. 12 անկիւն է վերին յարկն, պէս պէս դրուադօք, ստորինն՝ քառակողմն ընդ որ մուծանէ դուռն ի կամարակապ սենեակ, ունելով ի վերոյ դլանաձեւ ծակ կամ բացուած»⁶³:

Հաւանաբար, այս շէնքը, իր դիրքով, բազմակողմանի տեսնելու իր կարելիութիւններով, ուրիշ բան չէր՝ բայց եթէ մաքսահաւաք կայան մը:

Այսքանով կ'աւարտի խօջայ Նազարի շինարարութեանց մասին դիտարկումս:

Իրմէ մեկենասուած ձեռագիրներն ալ բազմաթիւ չեն: Իմ հաւաքմանս թիւ 95 Սաղմոսարանը գրուած է «Ըստեփանոս սուտանուն քահանայի» կողմէ, «ի խնդրոյ Պարոնաց Պարոն խօջայ Նազարին, յիշատակ բարի հոգոյ իւրոյ եւ ծնողացն իւրոց՝ խօջայ խաչիկին, Մամին, եւ եղբօրն՝ հանգուցեալ առ Գրիստոս խօջայ Սաֆարին, եւ որդւոց իւրեանց եւ դստերացն, եւ ամենայն արեան մերձաւորացն»: Դժբախտաբար, ձեռագիրն յիշատակարանին մէկ մասը կորսուած է, ինկած թերթի մը պատճառով, որով կը պակսի գրչութեան բուն թուականը: Բայց քանի որ խօջայ Նազարի եղբայրը կը յիշուի՝ խօջայ Սաֆար «հանգուցեալ առ Գրիստոս», վստահօրէն կրնանք եզրակացնել՝ թէ գրուած է 1618էն ետք եւ 1636էն առաջ, երբ կը մեռնի նաեւ խօջայ Նազար:

Դարձեալ՝ իմ հաւաքմանս թիւ 140 Յայտաւորութիւն, գրուած Նոր Զուղայ, 1659ին, խօջայ Վաթանի համար, կը յիշէ «ստացողի գրոցս խօջայ Նազարին եւ կողակցին՝ խօթունջանին, եւ որդւոցն՝ Պարոն Սարգիսին, Էլիազին, Վաթանին, եւ եղբօրն՝ խօջայ Սաֆարին»: Յայտաւորութիւն 37 թերթ միայն հասած է ինծի, ու գլխաւոր յիշատակարանը կը պակսի. իսկ իւրաքանչիւր օրուայ հատուածին ետեւ յաւելեալ կարճ յիշատակութիւնները կրկնութիւն են արդէն մեր դիտարկին: Հաւանաբար, ինչպէս ըսինք քիչ վերեւ, ասոնք յետ մահու յիշատակութիւններ են:

խօջայ Նազար նորոգել տուած է Բրիտանական Թանգարանին Add. 18,549 (Կոմիպերի ցուցակին թիւ 8) Աւետարանը, Սիւ ընդօրինակուած 1280ին, Ստեփանոս Վահագիէն: Նորոգութիւնը կատարած է Մեսրոպ Սիգանցի, որ գործն աւարտելով Ռիչ Թուականին (1618), կը յիշատակագրէ. «Զուղայեցի Պարոնաց Պարոն խօջայ Նազարն, որ ստացաւ զսա հալալ եւ յարգար վաստակոց իւրոց, եւ ետ վերստին նորոգել ծաղկել եւ զարդարել ոսկով եւ լազուարտով եւ ազգի ազգի երամբք դեղերով»: Քիչ ետք՝ դարձեալ. «Կրկին անգամ

63. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսակամ, Վենետիկ, Ս. Ղազար, 1898, էջ 423ա:

յիշեցէք ի Գրիստոս խօջայ Նազարն եւ կողակցին իւր խօթունջանն, եւ զորդիքն իւրեանց Պարոն Սաֆրազն եւ զԷլիազն, եւ զըստերքն իւրեանց...»:

Այս է գրչագրական ժառանգութիւնը՝ որ մնացած է խօջայ Նազարէն:

Տեսանք խօջայ Նազարի հօր՝ խօջայ խաչիկի Յայտաւորութիւն մէջ, որ խօջայ Նազարի կնոջ անունն էր խօթունջան կամ խօթունջան: Անոր մասին այլ ծանօթութիւններ կը պակսին՝ մեզի հասած յիշատակարաններուն մէջ: Միայն ուղեգիր Պետրոս տելլա Վալլէ կը յիշէ որ խօջայ Նազար վրացի կին ունէր: Անշուշտ ակնարկութիւնը խօթունջանի մասին է: Գուցէ խօթունջան վրաստանցի հայուհի մըն էր:

խօջայ Նազար ունեցած է նաեւ դուստրեր (կամ գոնէ դուստր մը), որոնց անունները զարմանալիօրէն չեն տրուիր յիշատակարաններու մէջ:

ՊԱՐՈՆ ՍԻՆԱՆ ԲԷԿ

Նախահայր խօջայ խաչիկի երրորդ որդին էր Սինան, որ կը շնչուի 1604ի Յայտաւորութիւն յիշատակարանին մէջ, ուր սակայն կը պակսի որեւէ անդրադոյն մանրամասնութիւն: Դժբախտաբար, ուղեգիրն ալ տեղեկութիւն չունինք իր մասին: Միայն Նոր Զուղայի հաւաքման թիւ 477 մագաղաթեայ Աւետարանին յիշատակարանը, զոր տեսանք վերեւ, կը խօսի Սինան Բէկի մասին:

«Այլ եւ Պարոն Սինան Բէկին,
Որ վաղմամի տղայ հասակին»:

Յայտնի չէ, սակայն, թէ ո՛ւր վախճանած է «տղայ հասակին», այսինքն՝ մանկահասակ. հի՞շ Զուղայ՝ թէ Նոր Զուղայ: Ցաւալիօրէն՝ յիշատակարանն ալ անթուական ըլլալով, մեզի թոյլ չի տար որ հետեւանք մը հանենք:

Սինան կը յիշուի նաեւ Բրիտանական Թանգարանի թիւ 8 ձեռագրի յիշատակարանին մէջ, Ռիչ Թուականին (1618), երբ արդէն մեռած էր, դատելով յիշատակարանին ոճէն:

ԸԻԱՆ ԵՒ ԲԱԶՈՒՄ

1604ի Յայտաւորութիւն մէջ, կը յիշուին խօջայ խաչիկի այս երկու որդիներն ալ, որոնք իրապէս մանկահասակ ըլլալու էին այն տարեկան:

Ըլան՝ անտարակոյս աղաւաղումն է Իւան (Յովհաննէս) անուանաձեւին, որ բաւական դործածուած է մեր մատենագրութեան ու վիճակագրութեան մէջ, Ժ. դարէն սկսած, եւ հաւանաբար՝ Վրացիներէն փոխ առնուած:

Ըլանի մասին, իր անունին այս յիշատակութենէն զատ՝ որեւէ տեղեկութիւն չունիմ⁶⁴:

Բազում նոյնպէս խոջայ խաչիկի որդին էր: Ծանօթ անուն է մեր պատմութեան մէջ՝ Բազայ, Բազիկ, Բազու ձեւերով⁶⁵: Իր մասին ալ միակ յիշատակութիւնը կը գտնենք իր հօր՝ խոջայ խաչիկի 1604ի Յայտաւարքին մէջ:

ԵԶԴԵԱՍ

Խոջայ խաչիկի յիշուած երկու դուստրներէն առաջինն է Եզդիսաս, յիշուած 1604ի Յայտաւարքի յիշատակարանին մէջ: Աճառեան կը թուէ այս անունը եւ Պարսկաստանի Եզդ քաղաքի անունին հետ կը կապէ անոր ծագումը⁶⁶: Աւելի ճիշտ կը նկատեմ որ ծագած ըլլայ Եազդ (Աստուած) եւ խաս (ընտիր) բառերէն. Եազդիխաս – Եազդիխաս. Աստուածընտիր:

Իր մասին որեւէ ծանօթութիւն կը պակսի ինծի: Կը յիշատակուի իր քրոջ խաթուն Աղատի մեկենասած Աւետարանի յիշատակարանին մէջ (Նոր Զուգայի թիւ 459), «Խաթուն Եզդիսաս» ձեւով:

ԱԶԱՏ

Խոջայ խաչիկի 1604ի Յայտաւարքին մէջ կը յիշատակուի անոր այս դուստրն ալ, որ կ'երեւի թէ կրտսերն էր յիշուած երկու քոյրերէն՝ Եզդիսաս եւ Աղատ:

Աղատ, կամ աւելի լաւ՝ խաթուն Աղատ ամուսնացած է եւ զաւակներու տէր եղած: Ինք մեկենասած է Նոր Զուգայի այժմեան հաւաքման թիւ 459 Աւետարանը, որուն յիշատակարանը կ'ըսէ. «Ոմն ի լուսածնեալ զարմից, խաթուն Աղատն... ետ գրել զսուրբ Աւետարանս եւ զարդարել ոսկւով եւ երանգերանդ ծաղկով, յիշատակ իւրն եւ իւր ծնողացն, հօրն՝ Պարոն Խոջայ խաչիկին, եւ մօրն՝ Մարիամին, եւ եղբարցն՝ Պարոն Խոջայ Սաֆարին եւ Պարոն Խոջայ Նա-

64. Նոր Զուգայի գերեզմանատունը, 1972ին, գտայ հետեւեալ դամբանաքարը, սա կարճ տապանագրով. «Այս է շիրիմ մանուկ գլխակ: Թվիմ Ռէն (1628)»: Կը տարակուսիմ որ ասիկա Ըլանէի շիրմաքարն ըլլայ:

65. ՀՐ. ԱՅԱՌԵԱՆ, Հայոց Անճառնոց Բառարան, Երեւան, Պետ. Հժ. հրատ. 1942, Հտ. Ա., էջ 360-361:

66. Անդ, Հտ. Բ. (1944), էջ 95:

ղարին, եւ քուերն՝ խաթուն Եզդիսասին, եւ ամենայն արեան մերձաւորացն. ամէն:

«Արդ որք ճաշակէք... Աստուած ողորմի ասացէք եւ ստացողի լուսապայծառ սուրբ Աւետարանիս զխօջայ Սլէմանն եւ զիւր ամուսինն զխաթուն Աղատն, եւ զիւրց զաւակքն՝ զխանզատէն, զԲարդատէն, զԱմիր Սարգիսն եւ Պարասկելին եւ զԹադուին, եւ զորդի խանզատէն՝ զՄիքայէլն. ամէն: Այլ եւ զարձեալ յիշեցէք զխօջայ Սուլեմանն, եւ զծնողսն՝ խոջայ Վալին եւ զՍուլթանն եւ զամենայն արեան մերձաւորս յիշեալ»:

Յայտնի է որ խաթուն Աղատ ամուսնացած էր խօջայ Սուլեմանի հետ (Սուլէյման-Սողոմոն), եւ ունեցած էր երեք մանչ զաւակներ եւ երկու դուստր: Առջեկ որդին՝ խանզատէն ունեցած է Միքայէլ անունով զաւակ մը, որ թոռնիկն էր խաթուն Աղատի:

(Շար. 2)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ